

ՊԼՇՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՔԵՂՈՒՆԹԻ Ի ԿՈՆԳՐԱԿԱՆ ՎԵՋԵՓԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակը յանուն երկից թեմակ. Արքեպիսկոպոսաց՝ Տփլսեաց, Աստրախանի և Նրեանի, Կառավարչի թեմին Բեսարաբիոյ և երկուց Կոնսիստորիայից Շամախույ և Շուշույ, որովք պատուիրեցաւ աջակցել ընդ ձեռն փոխանորդաց և գործակալաց թեմից իւրեանց ի գործ վերադարձի գաղթականաց ի հայրենիս. թ. 493, 494, 496, 497, 498 և 499:

Կոնդակ յանուն Ամեն Պատրիարքին և Պօլսոյ, որով պատուիրեցաւ բանակցել ընդ ուրոց անկ է վասն ապահով վերադարձի գաղթականաց յիւրաքանչիւր տեղիս, և պատուիրել վիճակաւոր Առաջնորդաց և Փոխանորդաց վիճակացն Տաճկաստանի՝ ջանալ ըստ ամենայնի արդել լինել յետ այսու նորոգ գաղթականութեանց. թ. 501:

— Եանուն Սինօղի ս. Էջմիածնի վասն տնտեսեղեաց բաշխելոցն ի բնակիչս Վաղարշապատի. թ. 509:

— Օրհնութեան յանուն Ժողովրդեան Ատրպատականի (Դավրէժ, Խոյ, Սալմաստ և Ուրմի), յորդորմամբ յարատեկոյ ի բարեպաշտական կենցաղս և յառաքինի գործս. թ. 537:

— Եանուն Աւետիս քահանայի Շաղոյեան Վանեցոյ ի Դավրէժ քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 538:

— Եանուն Կոստանդին քահանայի Տ. Յարութիւնեան Այլաբաթ գեղջ ձին Նախիջևանի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 538:

— Եանուն Յարութիւն քահանայի Գու-

ժաձոր գեղջ ձին Նախիջևանի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 559:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տէր և Տիկին Ալէլեանց Տփլսեցոց, վասն յօժարակամ պատրաստակամութեամբ յանձն առնելոյն նոցա զմատակարարումն ծախուց ուսման ի համալսարանս Ռուսիոյ՝ միոյ ի սարկաւազացն Մայր Աթոռոյ. թ. 566:

— Եանուն վարչութեան Ծեմարանի, որով յայտնի համաձայնութիւն Նորին Սրբութեան յընտրութիւն Բարեշնորհ Մամբրէ վարդապետի և երկուց սարկաւազաց վասն առաքելոյ զնոսա ի բարձրագոյն ուսումն՝ ի համալսարանս Ռուսիոյ. թ. 577:

— Եանուն Սինօղի, որով յայտնի կարգումն Տ. Դրիգոր Տ. վարդապետի Տ. Ստեփաննոսեան ի վանահայր վանացն ս. Թովմա Առաքելոյ Ագուլեաց. թ. 606:

— Եանուն Աւետիս քահանայի Շաղոյեան ի Դավրէժ, որով կարգի նա այցելու հովիւ երկից գաւառացն Ատրպատականի (Խոյ, Սալմաստ և Ուրմի). թ. 609:

— Եանուն Առաջն. Տեղապահին Վանայ Տ. Ստեփան վարդապետի Աղազատեան, որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետականականակուռ. թ. 610:

— Եանուն Դիոնէսիոս քահանայի Վան քաղաքի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 611:

— Եանուն Մեսրոբ քահանայի Զանկեան Վանեցոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 612:

— Եանուն Սինօղի ս. Էջմիածնի, որով

կարգի վանահայր վանացն Սաղեանի Տ. Թովմա վարդապետ Բաղդասարեան. Թ. 615:

— Յանուան Տ. Գրիգոր Տ. վարդապետի որով կարգի նա վանահայր ս. Թովմա Առաքելոյ վանացն Ագուլիաց. Թ. 632:

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

20 ապրիլի. Երևանի Պ. Նահանգապետը Թ. 3064 և 997 գրութիւններով յայտնում է Սինոզին, որ Զանջլուայ ս. Կարապետի վանքը ֆեասուած լինելով երկրաշարժից կործանման վտանգ է սպառնում, և խնդրում է Սինոզի տնօրէնութիւնը: Սինոզը վճռեց գործակալների և գաւառապետների միջոցով յայտնել ժողովրդին, որ մինչև վանքի նորոգութիւնը ուխտագնացութիւնն արգելուած է:

4 մայիսի. Կարուց Հոգեւոր կառավարութիւնը Թ. 24 և 416 գրութիւններով յայտնում է Սինոզին, որ «Տալլար» Աթոռապատկան հոգի կապալառուն պայմանը խախտել է: Սինոզը վճռեց պատուիրել Կարուց Հոգեւոր կառավարութեան նախ յիշեալ կապալառուին հեռացնելով նոր ածուրդ նշանակել ու պայմանը ներկայացնել Սինոզին ի հաստատութիւն: Երկրորդ՝ դատաստանական կարգաւ կապալառուից 1500 ռ. տուգանք ստանալ:

15 մայիսի. Սինոզը լսելով Վրաստանի և Իմերէթի թեմի Կոնսիստորիայի Թ. 1928 յայտարարութիւնը, վճռեց ծանուցանել Ռուսաստանի Հայոց հոգեւոր բոլոր ատեաններին, որ հայ քահանաները քօտ խնդրոյ միւս ոչ օրթոդոքս քրիստոնեաների (կաթոլիկների, բողոքականների, ասորիների և հաբեշների) կարող են կատարել նոցա հոգեւոր պէտքերը:

Ռուսաստանի սովետներին օգնող մասնաժողովը ապրիլի 22-ի գրութեամբ խնդրում է Սինոզից օժանդակել իրեն դրամական նւաասաներ ժողովելու գործում և ցոյց տալ թէ որտեղի հայ ժողովուրդը օգնութեան կարիք ունի: Սինոզը վճռեց պատուիրել Ռուսաստանի Հայոց Կոնսիստորիաներին, որ հրաւեր կարգան հայ ժողովրդեան օգնելու անբերրութիւնից ֆեասուած Ռուսաստանի ազգաբնա-

կութեանը և հանգանակած գումարները ուղարկեն նշանակեալ հասցէին՝ նոցա քանակութեան մասին տեղեկութիւն տալով Սինոզին:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

«Դու ես վիմ, եւ ի վերայ այդ վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դռամ դռնից զնա մի յաղթանակեցին»:

Մատթ. ԺԶ. 18.



ՍԿԱՅԱԿԱՆ ոսկէ տառերով Հռոմի ս. Պետրոս եկեղեցւոյ՝ քրիստոնէական ամենահոյակապ տաճարի, գմբէթի մէջ արձանագրուած՝ Հռոմէական եկեղեցւոյ նուիրապետական ձգտումների հիմք են կազմում այս խօսքերը. բայց նոքա կարող էին արձանագրուած լինել նաեւ քրիստոնէական բոլոր տաճարների և ամենափոքր մատուռի գմբէթի մէջ, և իւրաքանչիւր եկեղեցւոյ կենդանութեան սկզբունք և գործունէութեան նշանաբան համարուիլ: Այդ հասկանալու համար պէտք է պարզել նախ թէ ինչ կապակցութեան մէջ են ասուած նոքա աւետարանում և ինչ է նոցա բառացի իմաստը:

Փրկչի երկրաւոր կենաց ամենակարեւոր լոպէսներից մէկն էր, երբ այդ հանդիսաւոր խօսքերն արտասանուեցան: Անցել էին Գալիլիայի այն գեղեցիկ օրերը, երբ Նորա քրիստոնէութիւնների թարմ տպաւորութեան ներքոյ՝ ողևորուած ամբողջ հեռեւում և շրջապատում էր Նորան ամեն տեղ. այդ ամբոխի առաջնորդների հետ մի քանի թեթեւ վիճարանութիւններ ունենալուց յետոյ՝ Նա այս անգամ արդէն վճռական կերպով մերժել էր նոցա իրենից և սկիզբը դրել այն թշնամական յարաբերութիւնների որոնց հետեանքը իւր անարգական մահը պէտք է լինէր խաչի վրայ: Նա գիտէր այդ, և մենակ կանգնած